ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» Մարտի 2026 թ. N 42-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը և 15-րդ կետը, որակավորման հանձնաժողովի 2026 թվականի մարտի 12-ի N 4 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2026 թվականի փետրվարի 24-ին և մարտին 18-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 9 կրեդիտ:

2. Հաստատել «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3/25/2026

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2026 թվականի Փետրվարի 25 **-ի N** 42 **-Ա հրամանի**

«BIM տեխնոլոգիաների հիմունքներ»

միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ապրիլի 2-9	18.00-20.00	«BIM տեխնոլոգիաների հիմունքներ»	**Վահագն Մադոյան**	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105, Ա 103 BIM լաբորատորիա	9 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ և 3-րդ կարգի մասնագետ 01-30, 34 մասնագիտություններ	36.000 դրամ